Նպաստներ Երեխաների Համար

Յուրաքանչյուր ամիս, գրեթե 3.8 միլիոն երեխաներ ստանում են մոտ 1.6 միլիար դոլար, որովհետեւ նրանց ծնողներից մեկը կամ երկուսը հաշմանդամ, կենսաթոշակառու եւ կամ մահացել են: Այդ նպաստները օգնում են ընտանիքի անդամներին ապահովելու կյանքը գոյատեւելու անհրաժեշտություններ եւ հնարավորություն ստեղծում են երեխաների երկրորդական վարժարան ավարտելը: Երբ ծնող մը հաշմանդամ է դառնում եւ կամ մահանում, Սոցիալական Ապահովությունը կայունացնում է այդ ընտանիքի դրամական ապագան:

ԾԱՆՈՒՑՈՒՄ *Այն հաշմանդամ երեխաները, որոնց ծնողներն ունեն փոքր եկամուտ կամ դրամական միջոցներ, կարող են իրավասու լինել ստանալու համար Լրացուցիչ Ապահովության Եկամուտի (SSI) նպաստներ: Կարդացե՛ք* Benefits For Children With Disabilities *(Publication No. 05-10026). Այս հրատարակությունը,* Նպաստներ Հաշմանդամ Երեխաների Համար, *Հայերեն լեզվով չկա: Օրինակ մը ստանալու համար դիմե՛ք մեզ:*

Ո՞վ կարող է ստանալ երեխայի նպաստներ

Ձեր կենսաբանական, որդեգրած եւ խորթ երեխան կարող է ստանալ նպաստներ: (Որոշակի դեպքերում ձեր երեխան նույնպես կարող է իրավասու լինել նպաստներ ստանալու իր մեծհոր կամ մեծմոր հասույթից):

Նպաստներ ստանալու համար երեխան պետք է ունենա.

- Ծնող(ներ), որը/որոնք հաշմանդամ է/են եւ իրավունք ունի/ունեն ստանալու Սոցիալական Ապահովության նպաստներ կամ
- Ծնող, որը մահացել է բավականաչափ երկար աշխատելուց եւ Սոցիալական Ապահովության հարկեր վճարելուց հետո:

Երեխան պետք է նաեւ լինի.

- Ամուրի.
- 18 տարեկանից երիտասարդ.
- 18-19 տարեկան տարիքի եւ դպրոցական աշակերտ (12-րդ դասարանից ոչ բարձր) կամ
- 18 տարեկան եւ աւելի սակայն հաշմանդամ: (Հաշմանդամությունը պետք է սկսած լիներ մինչեւ 22 տարեկանը):

Ի՞նչ է պահանջվելու ձեզանից երեխայի նպաստներ դիմելու ժամանակ

Ձեր երեխայի համար նպաստներ ստանալու դիմում ներկայացնելու ժամանակ, ձեզանից կպահանջվի երեխայի ծննդյան վկայականը եւ ծնողների եւ երեխայի Սոցիալական Ապահովության համարները: Հաւելեալ փաստաթղթեր կը պահանջենք ամէն մի տարբեր նպաստի դիմումի համեմատ: Օրինակ, եթե դուք դիմում եք վերապրող երեխայի նպաստի համար, ապա ձեզնից կը պահանջվի ներկայացնել ծնողի մահվան ապացույցը: Եթե դուք դիմում եք հաշմանդամ երեխայի համար նպաստներ ստանալու, ապա ձեզնից կը պահանջվի ներկայացնել բժշկական վկայություն՝ հաշմանդամությունը ապացուցելու համար: Ձեզ օգնող Սոցիալական Ապահովության ներկայացուցչը կը բացատրէ թե ինչպիսի այլ փաստաթղթեր պետք ունենք:

Նպաստները կարող են շարունակվել 18 տարիքից հետո

Նպաստները դադրում են, երբ ձեր երեխան լինում է 18 տարեկան՝ եթե ձեր երեխան ուսանող կամ հաշմանդամ չե:

Արդյո՞ք ձեր երեխան ուսանող է

Ձեր երեխայի 18-րդ տարեդարձից երեք ամիս առաջ, մենք նամակ կուղարկենք ձեզ՝ տեղեկացնելու թե երեխայի նպաստները կավարտվեն նրա 18 տարեկան ըլլալու պատճառով, (եթե ձեր երեխան երկրորդական կամ նախնական ցերեկային դպրոցի ուսուցման աշակերտ չե): Եթե ձեր երեխան 19 տարեկանից երիտասարդ է եւ հաճախում է երկրորդական վարժարան, նա պետք է մեզ ներկայացնէ դպրոցի պաշտոնավարի կողմից լրացված փաստաթուղթ, վավերացնելով աշակերտի դպրոցական հաճախումը: Այնուհետեւ նպաստները, որպես կանոն, շարունակվում են մինչեւ նրա ավարտումը կամ նրա 19-րդ տարեդարցից երկու ամիս հետո՝ այն որ ավելի շուտ տեղի կունենա:

Եթե ձեր երեխան հաշմանդամ է

Նպաստները կը շարունակվեն 18 տարեկանից աւելի եղող հաշմանդամ երեխաների համար: Մանկական հաշմանդամության նպաստները վճարվում են նաեւ 18 տարին լրանալուց հետո, եթե հաշմանդամությունը սկսվել է մինչեւ երեխայի 22-րդ տարեդարձը:

(շրջել)

Եթե դուք խնամում եք երեխայի

Եթե դուք ստանում եք նպաստներ, որովհետեւ ունեք ձեր խնամքի տակ գտնվող երեխա, ձեր նպաստների սահմանաշրջանը որոշվում է երեխայի ստացած նպաստների կողմից:

Եթե երեխան հաշմանդամ չե, ձեր նպաստները կը դադրեն երբ լրանա նրա 16-րդ տարին:

Եթե երեխան հաշմանդամ է, ձեր նպաստները կարող են շարունակվել, եթե դուք հաստատել եք ծնողական հսկողություն եւ պատասխանատվություն հոգեպես հաշմանդամ երեխայի նկատմամբ կամ մատուցում եք անձնական ծառայություններ մարմնապես հաշմանդամ երեխայի համար: Նախքան երեխայի 16-րդ տարին լրանալը մենք նամակ կուղարկենք ձեզ բացատրելով այն պայմանները, որոնց միջոցով ձեր նպաստները կարող են շարունակվել:

Ո՞րքան կարող է ստանալ ընտանիքը

Իբր ընտանիքի անդամ, մի երեխա կարող է ստանալ ծնողների կենսաթոշակի կամ հաշմանդամության նպաստի մինչեւ կէսը, կամ մահացած ծնողի Սոցիալական Ապահովության հիմնական նպաստի 75 տոկոսը: Սակայն, այն գումարը որ կարող ենք վճարել մի ընտանիքի սահմանափակված է : Ընտանիքի առավելագույն վճարումը որոշվում է Սոցիալական Ապահովության յուրաքանչյուր նպաստի հաշվարկումի ընթացքում եւ կարող է լինի ծնողների նպաստի լրիվ գումարի 150-ից մինչեւ 180 տոկոսը: Եթե ընտանիքի բոլոր անդամների վճարվող գումարը գերազանցում է այս սահմանը, ապա յուրաքանչյուր անձի նպաստը համաչափորեն կրճատվում է (բացառությամբ ծնողներինը) մինչեւ գումարը հասնի առավելագույն թույլատրելի գումարին:

Սոցիալական Ապահովության հետ կապ հաստատելը

Հավելյալ տեղեկության համար, այցելեցեք մեր կայքէջը, ***www.socialsecurity.gov*** ուր նաեւ կարող եք գտնել մեր վերջին հրատարակությունները: Կարող եք նաեւ զանգահարել հետեւյալ անվճար թվին **1-800-772-1213** (խուլերը եւ դժուար լսողները թող զանգահարեն հետեւյալ հատուկ TTY թվին **1-800-325-0778**): Մենք կարող ենք պատասխանել ձեր մասնայատուկ հարցումները առաւօտյան ժամը 7-ից մինչեւ երեկոյան ժամը 7, Երկուշաբթի օրից մինչեւ Ուրբաթ: Ինքնաշխատ հեռաձայնային ծառայությամբ մենք որոշ հարցերի կարող ենք պատասխանել եւ տեղեկություններ հայթայթել օրը 24 ժամ:

Եթե Թարգմանիչի Պետք Ունեք. Մենք ձեզ համար անվճար թարգմանիչ կարող ենք տրամադրել որպեսզի դուք կարողանաք մեզ հետ ձեր գործերը կատարել: Այս թարգմանչական ծառայությունը կարող եք գտնել մեր գրասենյակներում եւ հեռաձայնի վրայ: Զանգահարեցե՛ք մեզ հետեւյալ թվին **1-800-772-1213** եւ ճնշե՛ք թիւ մեկը: Հեռաձայնը պատասխանող ներկայացուցիչը միացնում է ձեզ թարգմանիչի հետ որպեսզի ան օգնէ ձեզի: Եթե չ՝կարողացանք հեռաձայնով օգտակար լինել, ժամադրություն ենք տալիս որպեսզի դուք այցելեք ձեր տեղական գրասենյակը որտեղ ներկայ կը լինի նաեւ թարգմանիչը:

Մենք բոլոր խօսակցությունները գաղտնի պահում ենք: Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու քաղաքավար ծառայություն: Այս պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ խօսակցությունները:

Social Security Administration
SSA Publication No. 05-10085-AM
Benefits For Children (Armenian)
September 2004